



Ազդարարության Trumpet's Sound ինո՞ն

53-րդ ՏՄԻ, ԱՎԱՏՐԱՆԻ
ՍԵՊԱՏԱԲԵՐ - ՀՈԿՏԵՄԵՐ 2022





Հայ Ավելիարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBridge,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՌԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերքը Սիդնեյի Հայ Ավելիարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույնեցյան:

Այս թերքը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցենով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ո՞չ աչքն է տեսել, ո՞չ ականջը լսելՀովիվ Հրաչ Գույնեցյան

Ձեռքերը դեպի Երկինք պարզելՎեր. Հովսեփ Հովսեփյան

Սիրո գերագույն արարքըԴավիթ Դոկտորյան

Ա՞ն ձեռքն իմ, անգի՞ն ՏերՔաղված

Չե՞ որ տասն էլ մաքրվեցինՔաղված

Թասերի դատաստանն ու Բարեկոնի ամկումը (4)QMBC պանորամա

Աստված ընդդեմ Եգիպտոսի աստվածերի (1)Դուռ Սթորմը

Հաստատուն կանգնել մարտահրավերների բախվելիս ...Սթիվեն Թորու

Միսիոներություն դեպի Հայաստան #24ACM

Արցունքներս Լիբանանի համարACM

ՈՇ աչքն է տեսել, ո՛չ ականջը լսել

«ՈՇ աչքն է տեսել, ո՛չ ականջը լսել, ո՛չ էլ մարդու սիրտն են մտել այն բաները, որ Աստված պատրաստեց նրանց համար, ովքեր սիրում են Իրեն» (Ա Կորնթ. 2:9):

Սկսեմ մի հարցից: «Դուք սիրո՞ւմ եք Աստծուն: Եթե այո, ապա այս պատգամը ձեզ համար է: Ձեզ համար հատուկ պատրաստված մի տեղ կա, որ ոչ մեկ աչք չի տեսել, ոչ մեկ ականջ չի լսել, ոչ մեկ մարդու սրտով չի անցել:

Որոշ ժամանակ առաջ մի ընկեր ինձ մի փոքրիկ բույս տվեց ու խնդրեց այն դնել տարայի մեջ: Դա անսովոր բույս էր, որը ծաղկում է տարին մեկ անգամ՝ միայն գիշերը: Ես օր ու գիշեր հետևեցի այս բույսին: Մեկ տարում այն աճել էր շատ սաղարթով: Երբ տեսա բողքը, գիտեի, որ այն ծաղկելու է:

Ծաղկի գլուխը սկսեց ավելի ու ավելի մեծանալ: Ես այն դրսից ներս բերեցի, քանի որ տեսնում էի, որ շուտով ծաղկելու է: Այո՛, այդ գիշեր մոտավորապես ժամը 21:00-ին բողքոջը բացվեց, և ես ականատես եղա մի շատ անսովոր ու գեղեցիկ սպիտակ ծաղկի, ինչպիսին նախկինում չեի տեսել: Այն ափիս չափ մեծ էր, և ես արքուն մնացի մինչև կեսգիշեր՝ հիանալով նրա գեղեցկությամբ: Ժամը 3:00-ին գնացի նորից նայելու: Ծաղկը դեռ ծաղկած էր, բայց ժամը 6:00-ին այն ամբողջովին բառամած էր, գլուխը կախել էր, և սահարքն անկենդան էր:

Աստված իսկապես զարմանալի գեղեցիկ բույս է ստեղծել, որը ծաղկում է տարին մեկ անգամ և միայն գիշերը: Եվ երբ կարդում եմ, որ Աստված Իրեն սիրողների համար պատրաստել է այնպիսի մի վայր, որ ոչ մեկ աչք չի տեսել, ոչ մեկ ականջ չի լսել, ոչ մեկ մարդու սրտով չի անցել, կարողանում եմ միայն պատկերացնել, քեզ ոքա՞ն գեղեցիկ է Տերն ամեն ինչ պատրաստել Իրեն սիրողների համար:

Այո՛, մի օր դժվարությունն ու ցավը կվերանան, երբ տեսնենք Նրան Իր փառքի մեջ: Ամբողջ գիշեր արքուն կլինեմ՝ հիանալով իմ թանկագին Տեր Հիսուսի գեղեցկությամբ:

Եթե Նա կարող է այդքան գեղեցկություն դնել մի ծաղկի մեջ, որը ծաղկել է ընդամենը ութ ժամ, ապա ինչպիսի՞ն է լինելու հավիտենականությունը։ Ո՞վ բանկազին Տեր, որքա՞ն սիրված և օրինված ենք Ձո՞ւ կողմից։

Հ. Գ.

Զեռքերը դեպի Երկինք պարզել

Ելից 17:1-13

Ստված օգնում էր իսրայելացիներին իրենց ճամփորդության ողջ ընթացքում։ Նրանց տվեց մանանա և այն ամենը, ինչի կարիքն ունեին։ Սակայն նրանք շարունակում էին տրտնջալ ու բողոքել, ինչպես հաճախ մենք ենք անում։

Աստված նրանց ծարավը հագեցնելու համար ջուր տվեց։ Իսրայելի որդիները բարմացան և ուրախացան։ Սակայն ինչպես հաճախ տեղի է ունենում, այդ օրինությանը փորձություն հաջորդեց։

«Ամաղեկացիները եկան ու հարձակվեցին իսրայելացիների վրա» (Ել. 17:8):

Այս աշխարհում մենք նեղություններ և փորձություններ կունենանք։ Հիսուսն ասաց. «Այս բաները խոսեցի ձեզ իետ, որ ինձանում խաղաղություն ունենաք, աշխարհում նեղություն կունենաք, բայց բաջացե՛ք, ես հաղթել եմ աշխարհին» (Հովհ. 16:33):

Դարձյալ իսրայելացիները նեղության մեջ էին, և Մովսեսը Աստծո օգնությամբ իր ազգն առաջնորդեց հաղթանակի։ Մովսեսը Հետուին խնդրեց ճակատամարտն առաջնորդել, իսկ ինքը Ահարոնի և Ովրի իետ լեռան վրայից վերահսկում էր ճակատամարտը։ Այս ճակատամարտն ի՞նչ կապ ունի եկեղեցու իետ։ Եկեղեցին նույնպես պատերազմի մեջ է։ Մեր պատերազմը իշխանությունների կամ այլ կրոնների և նոյնիսկ ինքներս մեր դեմ չէ։ Մեր պատերազմը չար ուժերի դեմ է, որոնք պատերազմում են մեր դեմ (Եփես. 6:10-12):

Եկեղեցու գործունեության և դերի մասին մի քանի թյուր կարծիքներ կան, բայց ճշմարտությունը հետևյալն է.

- մենք միայն քարոզելու և վարդապետելու համար չենք,
- մենք միայն գումար հայթայթելու համար չենք (անկախ նրանից, թե ինչ նպատակով ենք դա անում),
- մենք միայն ծրագրեր ու միջոցառումներ կազմակերպելու համար չենք:

Ըստ Աստծո Խոսքի՝ մենք պետք է հոգևոր պատերազմ մղենք թրջնամու՝ չարի ոգեղեն ուժերի դեմ: Մենք պետք է հիշենք, որ հավիտենականության հարցերն են վտանգված, ոչ թե վարդապետական ու կրոնական ավանդույթներն ու սովորույթները: Հոգիները անորոշության մեջ են: Մարդության և սրբության զլսավոր չափանիշները ոտնահարվում են, պարկեցտության հիմքերը բուլանում են: Այսօր ճիշտը սխալ է դարձել, իսկ սխալը՝ ճիշտ:

Բայց Աստված մեզ պատերազմում հաղթելու «սպառագինություն» է տվել՝ Ավետարանի զորությունը (Հռոմ. 1:16), Սուրբ Հոգու զորությունը (Ա Հովհ. 4:4), Աստծո «սպառագինությունը» (Եփես. 6:13) և ի վերջո՞ հաղթանակը (Ա Կորնթ. 15:57-58):

Գուցե կյանքի այս պատերազմում Մովսեսի նման մենք էլ հոգսենք: Ամաղեկի դեմ մղվող պատերազմի ժամանակ որո՞նք էին գաղտնի գենքերը. աղորքն ու բացարձակ կախվածությունն Աստծոց: Երբ Մովսեսը ձեռքերը վեր էր բարձրացնում, որը խորհրդանշում էր Աստծուց օգնություն ստանալու աղերսը, իսրայելացիները հաղորդում էին, իսկ երբ Մովսեսն իր ձեռքերն իջեցնում էր, ամաղեկացիներն էին հաղթում: Նախկինում Աստված Մովսեսին պատվիրել էր ձեռքերը երկինք պարզել Տիրոջից օգնություն ստանալու համար (Ել. 9:22): Մովսեսը հնազանդվել էր ու ճաշակել Աստծո զորությունը: Այս պատմության մեջ հետաքրքրականն այն է, որ թեև Աստված պատրաստ էր օգնելու աստվածավախ իսրայելացիներին ու ակնկալում էր, որ նրանք լիովին իրեն վստահեն ու ապավինեն, սակայն ակնկալում էր նաև, որ նրանք էլ իրենց բաժին պարտականությունը կատարեն՝ աղորեն ու պայքարեն:

Երբեմն հաղթանակը միանգամից չի տրվում, և մենք հոգնում ենք ու հանձնվում և այլս չենք աղոթում: Մովսեսը նոյնպես շատ հոգնեց: Նա չէր կարողանում իր ուժերով առաջ գնալ, օգնության կարիք ուներ:

Հովիվները երբեմն ծառայության կամ անձնական ու ընտանեկան հարցերի պատճառով շատ են հոգնում: Մեզանից յուրաքանչյուրը ժամանակ առ ժամանակ ընկնում է գերհոգնածության մեջ: Ի՞նչ կարող ենք անել մեկս մյուսին օգնելու համար, որպեսզի այս պատեհազմի մեջ հաղթող դուրս գանք: Մենք կարող ենք ձեռք մեկնել հոգնած մարդկանց: Մովսեսի դեպքում մի քար դրեցին, որպեսզի նա հենվեր, իսկ Ահարոնն ու Ովքը դեպի վեր պահեցին նրա ձեռքերը:

Ինչպե՞ս կարող ենք դեպի երկինք պարզել հոգնած ձեռքերը: Նախ և առաջ մենք կարող ենք պատրաստ լինել օգնելու և լինել այնտեղ, որտեղ մեր կարիքն են օգում: Մենք պետք է նաև աղոթենք միմյանց համար, ինչպես Մովսեսն էր աղոթում պատերազմող մարդկանց համար: Մենք պետք է դադարեցնենք մեկս մյուսին դատելին ու դատապարտելը և հավատարմորեն իրար հետ Աստծուն երկրպագենք ու միանանք նրանց, ովքեր Ահարոնի և Ովքի նման ջերմեռանդ են Տիրոջը ծառայելու մեջ: Նրանք հաղթանակեցին, որովհետև Ահարոնն ու Ովքը պատրաստ էին ամբողջ օրը աղոթքով վեր պահել Մովսեսի ձեռքերը: Արդյո՞ք մենք պատրաստ ենք դեպի երկինք պարզել մեր հոգնած ձեռքերն այնքան, մինչև հաղթանակը մերը լինի:

Վեր.՝ Հովսեփի Հովսեփյան



«Զգուշացե՛ք, չինի թե մեկը ձեզ գերի դարձնի փիլիսոփայությամբ

և դատարկ խարեռությամբ, որոնք հիմնված են մարդկային

ավանդությունների, կամ աշխարհի սկզբունքների վրա, և ոչ թե

Քրիստոսի: Քանզի Նրա մեջ է բնակվում Աստվածության ամբողջ լիությունը՝ մարմնապես: Եվ դուք կատարյալ եք Նրանում, որը գլուխն

է ամեն իշխանության և պետության»:

Կող. 2:8-10

Միրո գերագույն արարքը

Մենակարող Աստված նպատակ ուներ համայն մարդկության փրկության համար: Փիլիպ. 2:8-ն ասում է. «Մարդու կերպահանքով լինելով՝ Ինքն իրեն խոնարհեցրեց, մահվանը հնազանդվեց, անգամ խաչի մահվան»: Արդյոք մենք նույնապես կիոժարեի՞նք մահանալ ուրիշի համար: Կյանքը շատ քանկազին է, քայց ի՞նչ պատճառ կարող ենք ունենալ մեր կյանքերը զոհելու ուրիշների համար: Շատ կարևոր պատճառ պետք է լինի: Պետք է սեր լինի, որպեսզի հոժարենք մեր կյանքը զոհել ուրիշի համար: Աստծո Խոսքը այսպես է արտահայտվում Հովի. 15:13-ում. «Ավելի մեծ սեր ոչ մեկը չունի, քան սա, որ մարդ իր կյանքը դնի իր բարեկամների համար»: Ամենամեծ սերը կյանքը բարեկամիդ համար տալն է: Հոռոմ. 5:6-ում կարդում ենք. «Որովհետև, երբ մենք դեռ տկար էինք, իր ժամանակին Քրիստոսը մեռավ ամբարիշտների համար»: Քրիստոսն Իր կյանքը տվեց ամբարիշտի, թշնամու համար: Արդյոք մեզանից ո՞վ կիոժարի իր կյանքը իր թշնամու համար տալ:

Մի քերթում այսպիսի վերևագիր կար. «Զանաց ազատել ընկերոջը, սակայն երկուսն էլ խեղդվեցին»: Հիշեցի ևս մի դեպք: Սիսիսիպի գետում մարդը փորձել էր ազատել մի տղայի, սակայն ինքը խեղդվել էր: Խսկապես այս մարդիկ փորձել են ազատել ուրիշներին, որոնց չեն ճանաչել: Հավանաբար այդ փոքրիկ տղան շատ երախտապարտ էր այն անձին, ով իրեն ազատել էր մահից: Երբ խոսում եմ սիրո, գրիողության և երախտապարտության մասին, նաև հիշում եմ, որ եղել են ապերախտները: 40 տարի առաջ լսել էի որքեայրի կնոց մասին, որի տունը մեկ գիշերվա մեջ անակնկալ կերպով այրվել էր: Երբ որքեայրին փորձում էր իր երեք տարեկան աղջնակին կրակից ազատել, վնասել էր դեմքը և ձեռքերը: Աղջնակի վարժարանի ավարտական հանդեսի օրը մայրը ուրախությունից արցունքուտ աչքերով ամբոխի միջով փորձում էր հասնել աղջկան՝ նրան ողջագուրելու համար: Երբ շրջապատի մարդիկ նկատեցին այս այրած դեմքով կնոց ինքնուրբունք, աղջիկն ասաց, որ կարևորություն չտան նրան, որովհետև իրենց սպասուիին է: Ի՞նչ մեծ ապերախտու-

թյուն: Մարդ ինչպե՞ս կարող է ապերախտ լինել, երբ ինչ-որ մեկն իր կյանքը փորձել է զոհել, որպեսզի նա ապրի: Եվս մի օրինակ եմ հիշում անձնազրության մասին: Իմ բարեկամներից մեկը, ով Վիետնամում էր, պատմում էր, թե ինչպես մի խումբ զինվորներով գրուցում էին, երբ հանկարծ քշնամու կողմից նոնակ ընկավ իրենց մոտ: Այս խմբից մի զինվոր նետվեց նոնակի վրա, որը պայթելով՝ կտոր-կտոր արեց նրան, սակայն մյուսները ազատվեցին: Ամերիկայի պատմության 1777 թվականին, հեղափոխության ժամանակ 22 տարեկան երիտասարդը՝ Նեյքըն Հեյլը, իբրև դավաճան բռնվել էր անգլիացիների կողմից: Երբ նրան պատրաստում էին կախաղան բարձրացնել, հարցրել էին, թե արդյոք ասելիք ունի՞ կախվելուց առաջ: Նա ասել էր. «Յափում եմ, որ միայն մեկ կյանք ունեմ տալու իմ երկրի համար»: Նա շատ էր սիրում իր երկիրը: Սերը մեծ ուժ է, որ մղում է անձին անհնարին քայլեր անելու: Արդյոք այսօր մենք ո՞ր դասակարգին ենք պատկանում, երախտապարտների՞ն, թե՞ ապերախտների: Երախտապա՞րտ ենք, թե՞ ապերախտ՝ Հիսուս Քրիստոսին՝ խաչի վրա սիրահոժար մեռնելու համար: Պողոս առաքյալը գրում է, որ Աստված Իր սերը մեզ հայտնեց, երբ դեռ մեղավոր էինք, որպեսզի հավատալով փրկվենք ու Նրան ընդունելով՝ հավետ կորսայան չմատնվենք: Հիսուսն ասել է. «Ոչ ոք այն չի վերցնում Ինձանից, այլ Ես Ինքս եմ այն վար դնում. Ես իշխանություն ունեմ այն վար դնելու և իշխանություն ունեմ վերատին այն առնելու»: Եթե սիրտդ Աստծուն է դարձել, ամրող էությունն և ունեցվածքն Աստծուն է դարձել: Ի՞նչն է կարևոր: Արժե՞ տանք Նրան մեր սիրտը:

Եթե մտածում եմ, թե ինչո՞ւ Աստված Իր Որդուն ուղարկեց խաչափայտի վրա մահանալու իբրև միջոց՝ փրկելու բոլոր նրանց, ովքեր Նրան կրնդունեն որպես Տիրոց և Փրկչի, հարցնում եմ՝ մի՞թե ուրիշ կերպ չկար: Անշուշտ կար, բայց Սուրբ Գիրքն ասում է, որ առանց արյուն թափելու մեր մեղքերը չեն ներվի: Հիսուսն Իր արյունը թափեց մեր մեղքերի համար: Սուրբ Գիրքն ասում է, որ եթե Հիսուսը հարություն չառներ, մեր քարոզմերը իզուր կլինեին, մեր բոլոր արածները իզուր կլինեին: Հիսուս Քրիստոսի պատմությունը թաղումով չափարտվեց: Եթե թաղումով ավարտվեր, շատ ցավալի վիճակ կունենայինք: Աստծո Խոսքն ասում է. «Որովհետև մեղքի վար-

ճը մահ է, բայց Աստծո պարզել հավիտենական կյանք է՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով»: Ուրեմն հավիտենական կյանք ունենք, պարզել, որ Հիսուսը մեզ համար պատրաստեց՝ խաչի վրա մահանալով: Հռոմ. 8:1-ն ասում է. «Հետևաբար, իմաս դատապարտություն չկա նրանց համար, ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ են, ովքեր մարմնապես չեն քայլում, այլ՝ ըստ Հոգու»: Այս համարները մեզ սովորեցնում են, որ երբ ընդունում ենք Հիսուսին, նոր անձ ենք դառնում, բայց երբ փոփոխություն տեղի չի ունենում մեր սրտում և կյանքում, նմանվում ենք մի ոճրագործի, որը մարդ էր սպանել, բանտ էր գնացել ու պիտի կախվեր: Ուր տարի անց այս անձի եղբայրը այցելել էր նրան: Եղբայրը կառավարչի լավ բարեկամն էր և շատ ծառայություններ էր մատուցել Վերջինիս: Երբ կառավարիչն իր պաշտոնից ու նահանգից պետք է հեռանար, այս մարդուն արտահայտել էր իր երախտապարտությունը և հարցրել, թե ի՞նչ կարող է փոխադարձ անել: «Ոչինչ», - պատասխանել էր մարդը: «Լսածիս համաձայն դու եղբայր ունես բանտում, և ահա բոլոր այն բղբերը, որոնք ներում պիտի շնորհեն եղբորդ»: Եղբայրը վերցրել էր այդ բղբերը և գնացել էր եղբորը այցելության: Բանտում նա նրան հարցրել էր, թե երբ դուրս գա, ի՞նչ է անելու: Եղբայրը պատասխանել էր, որ առաջին առիթին սպանելու է դատավորին և դատարանի անդամներին, որոնք իրեն դատապարտել են: Ուր տարի հետո այս ոճրագործի հոգին տակավին փոխված չէր, տակավին ուզում էր սպանել: Երբ եղբայրը լսել էր սա, սրտի ցավով լրությամբ բղբերը գրապանի մեջ էր դրել ու հեռացել էր բանտից: Օրեր անց այս ոճրագործին կախել էին: Մի՞թե ցավալի չէ, որ զղջալու ու դարձի գալու փոխարեն, մարդը որոշել էր նոյն ճանապարհով քայլել: Հիսուսի շնորհիվ նոր կյանք ստանալուց հետո մենք պետք է շարունակենք ապրել այդ նոր կյանքը մինչև վերջ: Փոփոխությունը տեղի կունենա, երբ մեր կյանքը և գործերը պտուի բերեն: Իբրև քրիստոնյաներ, մենք նշան ունենք, որը մեզ տարբեր է դարձնում ուրիշներից: Հիսուսն ասել է. «Այդ նշանով պիտի գիտնան, որ դուք իմ հետևորդներս եք»: Ինչպե՞ս, իրար սիրելով: Երբ Տեր Հիսուսին իսկապես սիրենք Իր կյանքը մեզ տալու համար, վստահ եմ՝ այն ժամանակ կկարողանանք իսկապես իրար սիրել:

Ծերակուտական՝ Դավիթ Դոկտորյան

ԱՌ ՃԵՆՔՆ ԻՄ, ԱՆԳԻՇՆ ՏԵՐ

1932-ին նոր էի ամուսնացել: Տիկինս՝ Նեթին, և ես Չիկագոյի հարավային շրջանում փոքր տան մեջ էինք ապրում: Օգոստոսյան տաք հետմիջօրեին պետք է սր. Լուս գնայի, որ մեծ ավետարանչական ժողովի գլխավոր մեներգիչն էի: Չեի ուզում գնալ, քանի որ Նեթին մեր առաջնեկի ծննդաբերության վերջին ամսվա մեջ էր: Շատերը սպասում էին ինձ սր. Լուսիում, ուստի համբուրեցի տիկնոջս և շտապ ճանապարհ ընկա:

Քաղաքից նոր էի դուրս եկել, երբ նկատեցի, որ շտապողականության մեջ երաժշտական պարագաներիս պայուսակը մոռացել եմ: Ուստի վերադարձած տուն: Տեսա, որ տիկինս խաղաղ քնած է: Սուտեցա մահճակալիս: Ինչ-որ բան ուժգին ստիպում էր, որ այնտեղ մնամ, բայց ճանապարհ շարունակելու և Նեթին չխանգարելու համար, այդ զգացումը թոքափելով, անձայն վերցրեցի երաժշտական պարագաներիս պայուսակը և տնից դուրս եկա:

Հաջորդ երեկոյան սր. Լուսի տապին ժողովուրդը կրկին ու կրկին խնդրեց ինձ, որ երգեմ: Երբ նստեցի, մի լրաբեր պատանի մոտեցավ ինձ և հեռագիր տվեց:

Ծրարը բացեցի և դեղին թղթի վրա կարդացի. «Տիկինդ հենց նոր մահացավ»:

Ծուրջբոլորս մարդիկ ուրախությամբ երգում էին ու ծափ տալիս, բայց ես հազիվ էի կարողանում զսպել լացս: Ծուտով տուն վերադարձաւ:

Իմացա, որ Նեթին տղա զավակ է լույս աշխարհ բերել: Սուզի և ուրախության մեջ օրօրվեցի, սակայն այդ գիշեր մանչուկս էլ մահացավ: Նույն դագաղում թաղվեցին Նեթին և մեր ծագուկը:

Ինքս ինձ կորցրի: Օրերով մեկուսացաց: Այնպիս զգացի, թե Աստված անարդար էր իմ հանդեպ: Չուզեցի այլևս Նրան ծառայել կամ հոգևոր երգեր գրել: Փափագեցի վերադառնալ աշխարհային երաժշտությանը, որին շատ լավ ծանոթ էի: Սակայն երբ առանձին

ընկճված վիճակով մութ սենյակում էի, սկսեցի վերիշել այդ հետմիջօրեն, երբ սր. Լուիս գնացի: Ինչ-որ քան ինձ շարունակ ասում էր, որ Ներիի հետ մնամ: Արդյոք դա Աստծո՞ւց էր: Ո՞հ, երանի ավելի ուշադիր լինեի և Աստծուն լսելով՝ տիկնոց հետ լինեի այդ օրը:

Նույն վայրկյանին ուխտեցի ավելի ուշադիր լսել Տիրոջ՝ չնայած որ դեռ վշտիս մեջ կորսաված էի: Ամեն մարդ ազնիվ էր իմ հանդեպ, հատկապես բարեկամս՝ պրոֆեսոր Ֆրայը: Հաջորդ շաբաթ երեկոյան նա ինձ տարավ մոտակա երաժշտական քոլեց, ուր շատ լուր էր և իրիկնամուտի արևի շողերը պատուհանների վարագույրների հետևից ներս էին բափանցում: Նստեցի դաշնամուրի առջև և մատներս սկսեցին սահել ստեղների վրայով: Հանկարծ մի քան պատահեց: Անսովոր խաղաղություն պատեց ինձ: Այնպիսի զգացողություն ունեցա, կարծես կարող եմ ճեղքս մեկնել և Աստծուն դիմուել: Նկատեցի, որ մեղեղի եմ նվագում, որը նախապես երբեք չեմ նվագել, և բառերը, որ գլխիս մեջ էին, ճիշտ համապատասխանում էին դրան:

ԱՌ ՃԵՂՔՆ ԻՄ, ԱՆԳԻՌ ՏԵՐ,
ՈՒՂՂԻՌ ԻՆԱ ԿԱՆԳԱԵԼ ՎԵՐ,
ԶԻ ԻՆԳԱՅ ԵՄ, ՄԼԿԱՐ, ՈՒ ՄԽՈՒՐ:
ՄՐՐԻԿԻԾ, ԳԻՉԵՐԻԾ ԶԻՆՉ ԼՈՒՍԻՆ ԻՆԱ ՈՒՂՂԻՌ,
ԱՆԳԻՌ ՏԵՐ, ԱՌ ՃԵՂՔՆ ԻՄ, ՄԽՈՒՐ ԻՆԱ ԻՆԱԳՈՒՐ:

Տերը ինձ այս բառերը և մեղեղին տվեց և բուժեց իմ հոգին: Ես հասկացա, որ երբ մենք ամենախոր սուզի մեջ ենք և Աստծուց շատ հեռու ենք զգում, Նա մեզ ամենամոտն է, և մենք ավելի ընդունակ ենք Նրա բուժիչ հպումը զգալ: Ուստի շարունակեցի Աստծո համար ապրել ուրախությամբ և սիրով մինչև այն օրը, երբ Նա իմ ճեղքը կրոնի և ինձ տուն կառաջնորդի:

Հ.Գ. Թոմի Դորսին մինչև քրիստոնյա դառնալը հայտնի նվագախմբի առաջնորդ էր: Նա ապաշխարել էր Մկրտական համագումարի ժամանակ՝ լսելով «Ես ճանաչում եմ Փրկչին, իսկ որ՝» երգը: Իր ապաշխարությունից հետո սկսել է հոգևոր երգեր գրել: Նա հեղինակ է ավելի քան 1000 երգերի:

Քաղվածք

ԶԵ՞ որ տասն էլ մաքրվեցին

Դուկ. 17:17-18

Ըատերի մոտ հիվանդանոցը առաջացնում է չարչարանքների, վախի և նույնիսկ անելանելիության զգացում: Սակայն այն կարող է դիտվել նաև որպես հույսի, համբերության, նույնիսկ ուրախության վայր: Ինչևէ, հարկավոր է ընդունել, որ հիվանդանոցից ոչ հեռու թաքնված է մահը: Դրա դեմ չկա ոչ մի դեղամիջոց, և նույնիսկ բժիշկները նահանջում են: Այդուհանդերձ, փորձությունները սովորեցնում են մեզ աղոթել: Երբ բուժանձնակազմը անզոր է ինչ-որ բան անելու, մարդիկ սկսում են դիմել Աստծուն: Արդյո՞ք Նա օգնում է: Այո՛, այն էլ բազմաթիվ անգամ: Սակայն արդյո՞ք միշտ շնորհակալություն է լսում դրա դիմաց:

«Ես հիվանդին սայլակով հրում էի՝ հիվանդանոցի սրճարան մտցնելու համար: Ուր շաբաթ առաջ նա պառկած էր ինտենսիվ օգնության բաժնում լյարդի ցերոզով, բոքաբորբով և երիկամների անբավարարվածությամբ: Բուժքույրն ասաց, որ հրաշք է կատարվել: Մենք որոշեցինք միասին սուրճ խմել: Երիտասարդ կինը լի էր ուրախությամբ իր առողջացման առիթով: Ես փորձեցի խոսել նրա հետ հոգու փրկության մասին. «Տեր Հիսուս Քրիստոսը մեծ բժիշկ է, ով ուզում է օգնել մեզ: Նա ձեզ տվել է ևս մեկ հնարավորություն: Ընդունե՛ք այն հավատքով և խոստովանե՛ք ձեր մեղքերը: Մտածե՛ք հավիտենականության մասին»: Սակայն նա հակառակվեց. «Նախ ես ուզում եմ կրկին առողջ լինել: Ես ուզում եմ վայել կյանքը: Ահա թե ինչն է կարևոր ինձ համար: Խնդրում եմ, մի՛ խոսեք ինձ հետ դրա մասին»:

Մահից ազատված և առողջացման ճանապարհով քայլող կինը թիկունք դարձրեց Աստծուն: Անշնորհակալություն, անպատասխան սեր Աստծո նկատմամբ, անտարբերություն: Որքա՞ն հաճախ է Աստված հանդիպում սրան: Եվ միևնույն է Նրա շնորհը չի պակասում:

Քաղված

Թասերի դատաստանն ու Բարելոնի անկումը (4)

5. Գագանի վրա նստած կինը (17:1-18)

Նախորդ գլխում կարդում ենք. «Աստծո առաջ իիշվեց մեծ Բարելոնը, որ Իր սաստիկ ցասման զինու գավաքը նրան տա» (Հայտ. 16:19): Այստեղ՝ 17-րդ գլխում, մանրամասնորեն տեսնում ենք կրոնական Բարելոնի անկումը, այնուհետև 18-րդ գլխում՝ քաղաքական և առևտրային Բարելոնի անկումը: Այս կործանարար իրադարձությունները տեղի կունենան Տեր Հիսուսի՝ երկիր վերադառնալու ժամանակ:

Սկզբում առերեսվում ենք մի կնոջ, որը կոչվում է «մեծ պոռնիկ», որը նստում է շատ ջրերի վրա» (Հայտ. 17:1): Հրեշտակը Հովհաննեսին բացատրեց այս խորհրդանիշներից մի քանիսի իմաստը.

«Այն կինը, որին տեսար, մեծ քաղաքն է, որ բազավորում է երկրի թագավորների վրա» (հմք 18):

«Այն ջրերը, որ տեսար, որոնց վրա նստած է պոռնիկը, ժողովուրդներ են, բազմություններ, ազգեր ու լեզուներ» (հմք 15):

Ավելին, Հովհաննեսը տեսավ «մի կնոջ՝ բոստրագույն գագանի վրա նստած, և զազանը լեցուն էր հայինյական անուններով. ուներ յոթ գլուխ և տասը եղջյուր» (հմք 3): Յոթ գլուխների մեկ նշանակությունը հետևյալն է. «Յոթ գլուխները լեռներ են, որոնց վրա նստում է կինը» (հմք 9):

Հին Հռոմ քաղաքը կառուցվել է յոթ բլուրների վրա, և այսպես, մենք եզրակացնում ենք, որ մեծ քաղաքը, որը հիշատակվում է Հայտ. 16:19-ում, 17:18-ում և 18:10-ում, 16, 18, 19 և 21-ում, Հռոմ քաղաքն է՝ իր վերջնական վիճակում, որը մի փոքր տարբերվում է իր այսօրվա վիճակից:

Ըստ յոթ գլուխներին տրված մյուս նշանակության՝ նրանք ներկայացնում են յոթ թագավորների, որոնցից հինգն ընկել են: Ընկած

հինգ թագավորները կարող են վերաբերել մեծ հեթանոսական կայսություններին՝ եզիպտական, ասորական, քարելոնական, մարապարսկական և հունական, որոնք ընդգրկում էին մոտ 3000 տարվա համաշխարհային պատմություն և իրենց հետ տանում բուն Քարելոնի բոլոր չարիքները: Հովհաննեսի օրոք Հռոմեական կայսրությունը իշխում էր, բայց մ.թ.ա. 476 թվականին այն փլուզվեց: Այնուամենայնիվ, այն կվերակենդանանա տասը թագավորության տեսքով: Այս ամենը մատնանշվում է «Գաղանք... կար ու չկա և անհուն վիհից պիտի ելնի» (Հայտ. 17:8-11) խոսքով:

Կինը (կամ պոռնիկը) կարծես ներկայացնում է հավատուրաց հոռմեականությունը՝ միախառնված ուրացող բողոքականության և շատ այլ պաշտամունքների հետ: Նա իր ճակատին կրում էր «Խորհուրդ, մեծ Քարելոն՝ պոռնիկների ու երկրի պղծությունների մայրը» անունը (Հայտ. 17:5): Նա դիտարկվում է որպես գաղանի վրա հեծած (հմք 7), այսինքն՝ գաղանին կառավարող և վերահսկող՝ ներկայացնելով վիրխարի վերածնված Հռոմեական կայսրությունը՝ իր տասը թագավորությունների տեսքով (հմտ. 12-րդ համարի տասը եղջյուրների հետ): Այս կայսրության ուժը կզգացվի ողջ աշխարհում. բոլոր փոքր ուժերը իրենց հավատարմությունը կտան գաղանին (հմք 13):

Այնուհետև կարդում ենք. «Տեսա այն կնոջը, որ սրբերի արյամք ու Հիսուսի վկանների արյունով էր հարրած, ու երբ նրան տեսա, սաստիկ զարմացա» (Հայտ. 17:6, հմտ. Հայտ. 16:6, 18:24): Ակնհայտ է, որ ճշմարիտ քրիստոնյաների (հատկապես նրանց, ովքեր բացահայտորեն ընդդիմանում էին եկեղեցու կեղծ ուսմունքներին) դեմ իրականացվող հալածանքներն ու ջարդերն ավելի ինտենսիվ կրառնան, քան երբեմն: Մենք տեսանք, թե ինչպես էին քրիստոնյաների հետ վարվում Կեսարների օրոք և շատ դարեր անց՝ միջնադարի դավանող եկեղեցու ներքո, բայց այս հալածանքներն ու ջարդերը կհասնեն առավելագույն չափի, երբ կինը նատի գաղանի վրա Մեծ նեղության ժամանակաշրջանում: Բայց նա կկոտրվի և կկործանվի. «Աստծո առաջ հիշվեց մեծ Քարելոնը, որ իր սաստիկ ցասման գինու գավառը նրան տա» (Հայտ. 16:19):

Թեև գաղանը իր մեծ գորությունն ու իշխանությունը ստանում է

սատանայից, այնուամենայնիվ, նա պատրաստակամորեն տալիս է իր հավատարմությունը կնոջը, երբ տեսնում է նրա մեծ հարստությունը, շրեղությունն ու փառքը և, կարծես, գայթակղվում է նրանով (Հայտ. 17:2, 4): Մյուս կողմից, կինը ձևացնում է, թե կրոնասեր է, բայց գազանը և նրա հետևորդները անհծում են երկնքի Աստծուն (Հայտ. 16:9, 11, 21, 17:3): Սակայն որոշ ժամանակ անց գազանը հոգնում է կնոջը ենթարկվելուց և իր շուրջը հավաքում է տասը բազավորներին՝ կնոց դեմ պատերազմելու: Մենք կարդում ենք, որ «Տասը եղջյուրները... ատելու են պոռնիկին» (Հայտ. 17:16), և ակնհայտորեն թեժ կրիվ է լինելու. կինը և այն ամենը, ինչ նա ներկայացնում է, կպարտվեն և կայրվեն: Սատանան և նրա երկու մարդիկ (Հայտ. 13-րդ գլխի երկու գազանները) այդ ժամանակ աշխարհում կինեն գերազույն, բայց շատ կարճ ժամանակով: Այս ամենը կլինի Աստծո մտքին և նպատակին համապատասխան (Հայտ. 17:17):

Դեռի ոգիները (Հայտ. 16:14) կատարելու են իրենց աշխատանքը՝ ամբողջ աշխարհի բազավորներին իրենց զորքերով ու զենքերով Արմագեղոնում հավաքելը: Գազանը և տասը բազավորները «Գառնուկի հետ պիտի պատերազմեն, և Գառնուկը նրանց պիտի հաղթի, քանի որ Նա տերերի Տերն է և բազավորների Թագավորը» (Հայտ. 17:14): Այդ ժամանակ գազանը և սուտ մարգարեն (Հայտ. 13-րդ գլխի երկրորդ գազանը) կրոնվեն և կենդանի կնետվեն վառվող ծծմբի կրակուտ լիճը (Հայտ. 19:20): Սատանան նույնպես կհանդիպի իր վերջնական կործանմանը 1000 տարի անց (Հայտ. 20:10):

6. Կրկնություն

Մենք քննարկեցինք այն սարսափելի դատաստանների մանրամասները, որոնք տեղի են ունենալու երկրի վրա Տեր Հիսուսի վերադարձից առաջ: Խաղաղությունը կրագավիրի, և երկնքից եկող նոր երգ կհնչի, որը միայն 144,000 ծառաները կարող են սովորել: Դատաստանները կավարտվեն, և խաղաղությունն ու բարգավաճումը կվերականգնվեն մաքրված երկրի վրա:

Հովհաննես առաքյալին հաջորդաբար երեք հրեշտակների տեսիլք է տրվում, որոնցից առաջինը հոչակում է հավիտենական Ավետարանը, երկրորդն ավետում է Մեծ Բարելոնի անկումը, իսկ երրորդը

սարսափելի նախազգուշացումով զգուշացնում է նրանց, ովքեր երկրպագում են զազանին ու նրա պատկերին ու ստանում նրա նշանը:

Հաջորդիվ դիտարկեցինք երկրի բերքահավաքը ու ողկույզների բերքահավաքը, որը տեղի կունենա Տեր Հիսուսի՝ երկիր վերադառնալու ժամանակ: Նշեցինք, որ բերքահավաքը նախնառաջ ենթադրում է լավի և վատի (ցորենի և որոնի - Մատթ. 13:30) բաժանում մինչև դատաստանը, մինչդեռ ողկույզների բերքահավաքը ներառում է վատի (որոնմերի) ուղղակի դատաստանը: Թվում է, թե քիչ կասկած կա, որ նա, ով նատած է ամպի վրա, ոչ այլ ոք է, քան Տեր Հիսուսը՝ որպես Մարդու Որդի:

Երկրի խաղողի ողկույզների բերքահավաքը ներկայացնում է ամբողջ Աստվածաշնչի ամենասարսափելի դատաստաններից մեկը: Դարերի ընթացքում պատերազմներ են մղվել, ինչի արդյունքում շատ արյուն է թափվել, սակայն դրանք ոչինչ են՝ համեմատած խաղողի ողկույզների բերքահավաքի հետ: Այս դատաստանում սատանայի բոլոր մեծ առաջնորդները ստանում են իրենց պատիժը՝ Գաղանը, Հակաքրիստոսը և երկրի մեծ թագավորները:

Այնուհետև դիտարկեցինք Աստծո բարկության յոթ թասերը, և նկատեցինք, որ այդ իրադարձությունները տեղի են ունենալու նախքան Տեր Հիսուսի՝ երկիր վերադառնալը, և որ դրանք ավարտելու են Աստծո բարկությունը (Հայտ. 15:1): Դրան կհաջորդի Գառան բարկությունը (Հայտ. 6:16):

QMBC պանորամա

«Եթե Քրիստոսի հետ հարություն եք առել, ուրեմն, վերին բաները փնտրեցեք, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում:

Վերին բաների մասին մտածեցեք և ո՛չ թե այն, որ երկրի վրա է:

Որովհետեւ դուք մեռաք, և ձեր կյանքը պահպած է

Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ»:

Կող. 3:1-3

Աստված ընդդեմ Եգիպտոսի աստվածների

Ելից 7-12

Ելից 7-12-րդ գլուխներում արծարծվում են կարևոր թեմաներ: Այնտեղ արձանագրվում են Աստծո՝ մեծ հրաշքներ գործելու կարողությունը: Այս դրաստրումը ցույց տվեց, որ Աստված միակ ճշմարիտ Աստվածն է, և որ Եգիպտոսի աստվածները բացարձակապես անզոր են, ինչպես նաև փարավոննի մոգերի շատ սահմանափակ ուժ ունենալի է ապացուցվեց: Միաժամանակ տեղեկանում ենք փարավոննի սրտի խստացման պատմությունը և խրայելացի ստրուկներին ազատելու նրա՝ շատ սահմանափակ առաջարկները:

Սկսում ենք այն ճշմարտությունից, որ Աստված, և միայն Աստված, միակ ճշմարիտ Աստվածն է: Բայց հարց է առաջանում, թե ինչպե՞ս է Աստված ցույց տալիս, որ Ինք Աստված է: Եթե ինչ-որ մեկը գար մեզ մոտ՝ պնդելով, որ Աստծուց նոր պատգամ ունի, ինչպե՞ս նա կապացուցեր մեզ, որ ունի ճշմարտությունը: Միակ ճանապարհը նրա կատարած հրաշքներն են: Եթե հրաշքներ չեն կատարվում, ապա նոր հայտնությամբ անձը մեզանից ոչնչով չի տարբերվում: Մենք կարող ենք նաև փիլիսոփայություն մշակել և ասել, որ դա Աստծո պատգամ էր: Հայտնություն ունեցող մարդուն Աստծուց տարբերվում է այն, որ նա կարող է աջակցել իր պնդումին՝ ցույց տալով Աստծո զորությունը:

Պատմության մեջ եղել է չորս ժամանակաշրջան, երբ Աստված հրաշքներով ցույց է տվել իր պատգամի ճշմարտացիությունը: Առաջինը Եգիպտոսի դեմ էր, երբ Աստված ուզում էր, որ խրայելացիներն իմանան, որ Նա իրենց Աստվածն է, և Նա ուզում էր, որ փարավոնն իմանա, որ Նա միակ Աստվածն է, և որ Նրան պետք է հնազանդվեն: Երկրորդ անգամ Եղիայի և Եղիսեի օրոք էր, երբ Աստված մարգարեների միջոցով հաստատում էր իր պատգամը: Երրորդը՝ Տեր Հիսուսի ծառայության ժամանակ էր՝ Աստծո Որդի լինելու Նրա պնդումը պաշտպանելու համար: Նրան անմիջապես հաջորդեցին վաղ եկեղեցու ժամանակաշրջանի հրաշքները՝ որպես

ապացույց, որ փրկությունն այժմ միայն Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով է:

Ենդեմ Եգիպտոսի բոլոր աստվածների...

Հին ժամանակներում տարածված համոզմունք էր, որ ազգի աստվածները զորությամբ գերազանցում են այդ ազգի կողմից վերահսկող տարածքներում: Եգիպտացիները չին տարբերվում. նրանք հավատում էին, որ իրենց աստվածները, անշուշտ, զորությամբ գերազանցում են իրենց երկրում: Աստված նտադիր էր ցույց տալ, որ Եգիպտոսի աստվածներն անզոր են. Նա միակ Աստվածն է: Եթե մոտենում ենք Մովսեսի և փարավոնի միջև հակամարտության ավարտին, հասկանում ենք, որ իրականում դա հակամարտություն է Աստծոն և փարավոնի միջև: Աստծոն պատգամը Մովսեսին հետևյալն էր. «Եգիպտոսի բոլոր աստվածների հետ դատապահն եմ տեսնելու. Ես եմ Տերը» (Ելից 12:12):

Սի շարք հրաշքներով մեկ առ մեկ ապացուցվեց, որ Եգիպտոսի աստվածները անզոր են: Ընդհանուր առմամբ եղել է տասնմեկ հրաշք և տասը պատուհաս:

Հրաշք	Պատուհաս	Իրադարձություն	Ո՞ւմ դեմ
1		Գավազանը վերածվեց օձի	Պաշտամունքի առարկաներ
2	1	Զուրը վերածվեց արյան	Նեղոս
3	2	Գորտեր ամենուր	Նեղոս
4	3	Մժեղներ/ոչիլմեր	Ջրմերի մաքրությունը
5	4	Շնաճանճեր	Բենդզերուո՞ւ ճանճերի աստված
6	5	Անասունների կոտորած	Սուրբ ցուլը
7	6	Թարախապալարներ	Տիպոն, չար սկզբունքը
8	7	Կարկուտ	Իսիս և Օսիրիս

9	8	Մորեխսներ	Սերապիս
10	9	Խավար	Իսիս և Օսիրիս
11	10	Անդրանիկների մահը	Փարավոնի հարատև ապստամբությունը

Առաջին նշանը՝ գալագանը վերածվեց օձի

Մենք տեսանք, որ Աստված Մովսեսին չազատեց փարավոնի մոտ գնալու հանձնարարությունից: Եթե նա գնաց փարավոնի մոտ, նրա խնդիրն էր ասել, թե ինչ է Աստված պատվիրել իրեն անել և հրաշք-ներով ցույց տալ, որ Աստված ակնկալում է, որ փարավոնը հնագանդվի: Փարավոնի ու նրա ծառաների ներկայությամբ Մովսեսն ու Ահարոնը արեցին այնպես, ինչպես Աստված պատվիրեց՝ հատակին ցցելով Մովսեսի գալագանը, որը օձ դարձավ:

Կախարդների պատախանը

Յավոր սրտի, հրաշք գործելը երաշխիք չէ, որ պատգամին կհավատան: Սատանան ամեն ինչ կանի ճշմարտությունը վերացնելու համար: Այս առիթով նա կեղծ հրաշքներով համոզեց փարավոնին՝ ցույց տալով, թե Մովսեսն ու Ահարոնը ոչ մի արտառոց քան չեն արել: Փարավոնի կախարդները՝ Հանեսն ու Համբեսը, ըստ Բ Տիմ. 3:8-ի, ակնհայտորեն կարող էին նույն քանն անել:

Այնուամենայնիվ, նրանք օգտագործում էին հմայված օձեր, որոնք ազատվելուց հետո վերադառնում էին իրենց բնականուն գործունեությանը: Մարդկանց համար, ովքեր չին հավատում, Ահարոնի հրաշքը ոչ մի ազդեցություն չունեցավ: Նույնիսկ այն փաստը, որ Ահարոնի օձը կուլ տվեց կախարդների օձերին, ոչ մի ազդեցություն չունեցավ: Փարավոնի սիրտը հիմնականում կարծրացել էր, և նա հրաժարվում էր հավատալ:

Պատուհանները

1. Չուրը վերածվեց արյան

Զանի որ փարավոնը հրաժարվում էր հավատալ և հնագանդվել Աստծուն, Աստված Մովսեսին պատվիրեց Ահարոնի հետ գնալ Նե-

դոս, երբ փարավոնը գնացել էր այնտեղ լողանալու: Փարավոնի ներկայությամբ նա պետք է իրահանգեր Ահարոնին, որ վերցնի գավազանը և ձեռքը մեկնի Նեղոսի ջրի վրա: Դրա արդյունքում ջուրը արյուն էր դառնալու: Այս դատավճիռը հանգեցնելու էր գետում ձկների մահվան, Նեղոսը փտելու էր, իսկ քարե անոթների ջուրը վերածվելու էր արյան: Այս առաջին պատուհասը ուղղված էր Եգիպտոսի գրլիավոր աստվածներից մեկի՝ Նեղոսի դեմ:

Մարդը, ով չի ուզում հավատալ ճշմարտությանը, շուտով կարող է արդարացնել գտնել: Կրկին կախարդներն օգտագործեցին իրենց խորամանկությունը՝ համոզելու փարավոնին, որ Մովսեսին չպետք է հավատալ: Նրանք օգտագործեցին իրենց կախարդական արվեստը, ըստ երևոյթին, անելով նույնը, ինչ արել էր Ահարոնը: Փարավոնը հավատաց իր կախարդներին և անտեսեց Մովսեսին:

2. Գործեր

Փարավոնի անհնագանդության պատճառով Աստված Մովսեսին պատվիրեց երկրորդ պատուհասը թերել, և քանի որ Նեղոսը կարևոր աստված էր Եգիպտացիների համար, երկրորդ պատուհասը նույնապես ուղղված էր նրա դեմ: Եթե փարավոնը հրաժարվեր Տիրոջը հնագանդվելուց, Նեղոսը կհորդար գորտերով և անտանելի կրաքանչեր մարդկանց լյանքը: Սա իսկապես տեղի ունեցավ:

Կրկին կախարդները կարողացան ստիպել գորտերին հայտնվել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով գորտերի առատությունը, դա դրժվար խնդիր չէր թվում: Ավելի դժվար էր նրանցից ազատվելը: Սա մի քանի էր, որ կախարդներն անզոր էին անել: Փարավոնը ստիպված էր խնդրել Մովսեսին հեռացնել գորտերին:

Մովսեսը նույնիսկ խնդրեց փարավոնին նշանակել գորտերի գնալու ժամանակը: Դա տեղի ունեցավ, և փարավոնը կասկած չուներ, որ Աստված վերահսկում է: Սակայն նա դեռ չէր հավատում և չէր հնագանդվում: Եթե գորտերը հանվեցին, և փարավոնը տեսավ, որ հանգստություն կա, նորից խստացրեց իր սիրտը:

Դոն Սթորմը

(Շարունակությունը հաջորդ համարում)

Հաստատուն կանգնել մարտահրավերների բախվելիս

Խուսափել ընթացքը դանդաղեցնելու փորձությունից

Անգեի մարգարենության 2-րդ գլուխը սովորեցնում է, թե ինչպես կարող ենք ամուր կանգնել այն ծառայության մեջ, որին Տերը կանչել է մեզ, նույնիսկ եթք դժվարությունների ենք հանդիպում: Դա մեզ հիշեցնում է, որ մենք կարող ենք գործն ավարտին հասցնել միայն Տիրոջ միջոցներով:

Անգեի մարգարենության 1-ին գլուխն անդրադառնում է ճիշտ առաջնահերթության անհրաժեշտությանը: 2-րդ գլխում քաջալերանք կա, այնուհետև մարտահրավեր և վերջապես հետագա քաջալերանք: Այս բաժիններից յուրաքանչյուրն սկսվում է Տիրոջ Խոսքով (2:1, 10, 20): Տերը քաջալերում էր ժողովրդին շարունակել Վերակառուցել տաճարը՝ չնայած օրվա դժվարություններին:

Դժվարություններից մեկն այն էր, որ մարդիկ հասկացել էին, որ Վերակառուցված տաճարն ավելի փոքր էր լինելու ու քիչ տպավորիչ, քան այն տաճարը, որը կառուցել էր Սոլոմոն թագավորը (4 հմք):

Աշխատանքը շարունակելու քաջալերանքը (3-5 հմք)

Աստված խոսեց. դա տարվա գրեթե նույն ժամանակն էր (2:1), երբ սկզբնական տաճարը նվիրվել էր Սոլոմոն թագավորի կողմից (Աթագ. 8:1-3)՝ ընդգծելով Սոլոմոն թագավորի կառուցած տաճարի համեմատությունը: Տերը խոսում ու ասում է.

«Սակայն հիմա զորացի՞ր, ո՞վ Զորաբարել, - ասում է Տերը, և զորացի՞ր դու, ո՞վ Հովսեղելյան Հետո՝ քահանայապետ: Եվ զորացի՞ր, ո՞վ երկրի ամբողջ ժողովուրդ, - ասում է Տերը, - և աշխատեցեք, որովհետև Ես ձեզ հետ եմ, - ասում է Զորաց Տեր Աստվածը:... Իմ Հոգին մնում է ձեր մեջ, մի՛ վախեցեք» (2:4-5):

Ուշադրություն դարձրեք այս համարների չորս հիմնական պնդումներին:

Սուածինը՝ «զորացի՛ր»: Այս խոսքն առաջացնում է կենտրոնացած և վճռական մտածելակերպի պատկեր: Նոյն խոսքը տրվեց Սողոմոնին, երբ վերջինս կանչվեց առաջին տաճարը կառուցելու (Ա Մնաց. 22:13, 28:10, 20): Աստված այս անգամ աշխատում էր նույնքան, որքան Սողոմոնն թագավորի ժամանակ:

Երկրորդ՝ եթե Աստված աշխատում էր, ապա Նրա ժողովուրդը կանչված էր «աշխատելու»: Սա պարզ պատճառ էր առաջադրամը շարունակելու համար: Նրանք պետք է ապավինեին Տիրոջը և շարունակեին իրենց գործը:

Չորանալու և աշխատելու հրամանը աննկատ չի տրվել: Ուշադրություն դարձրեք «Որովհետև Ես ձեզ հետ եմ» խոստմանը, որը պետք է որոշի նրանց մտածելակերպը: Ինչպես Աստված Իր ժողովը լին էր, երբ նրանց հանեց Եղիպտոսից և ուխտի մեջ մտավ նրանց հետ (տե՛ս Ելից 20:45-46), այնպես էլ Նա (Իմ Հոգին) «մնում է ձեր մեջ» (5 հմր): Ամենակարող Տերը գործում էր նրանց միջոցով, և Նա էր նրանց զորության աղբյուրը:

5-րդ համարն ավարտվում է «Մի՛ վախեցեք» արտահայտությամբ: Ամենակարող Տիրոջ շարունակական ներկայությունը հիշեցում էր, որ Նա լիովին վերահսկում էր և որ նրանք վախենալու ոչինչ չունեն:

Քաջալերվեք Աստծո հրաշալի ծրագրերով (6-9 հմր)

Այնուհետև Տերը կենտրոնացավ ապագայի վրա՝ ցույց տալով, թե ինչ է անելու: Տերն ասաց, որ գործադրելու է Իր գերիշխան և ստեղծագործ զորությունը՝ ցնցելով երկինքն ու երկիրը (6 հմր): Այս համատեքստում Նրա զորությունը օգտագործվելու է նաև տաճարը վերակառուցելու համար անհրաժեշտ ռեսուրսները տրամադրելու գործում (7-8 հմր):

Նրանց հեռանկարը ոչ միայն Աստծո ներկա ծրագրերով սահմանափակվելն էր, այլև դեպի ապագա ձգվելը: Տերը խոստացավ, որ տաճարը կլինի ավելի փառավոր, քան նրանք կարող են պատկերացնել (տե՛ս հմր 9)` գերազանցելով Սողոմոնի տաճարին: Սա կկատարվեր երկու եղանակով.

ա) Ապագայում տաճարը նկարագրվեց որպես «հոյակապ» (Մարկ. 13:1):

բ) «Փառքը» ավելի մեծ եղավ, երբ Հիսուսը ներկա գտնվեց տաճառում՝ երկրի վրա Իր ծառայության ընթացքում: Նա նաև պնդեց, որ Ինքն ավելի մեծ է, քան տաճարը (Մատթ. 12:6) և իշխանություն է գործադրել տաճարի վրա (Հովհ. 2:13-22):

Խոստման հետագա կատարումը (տե՛ս հմբ 9) կլինի այն, որ Երուսաղեմը կլինի այն վայրը, որտեղ Հիսուսը խաղաղություն կրերի Աստծո հետ՝ չնայած Իր մահին (Կող. 1:19-20) և վերջնական խաղաղություն՝ Իր վերջնական քագավորության ժամանակ (Հայտ. 21:22-23):

Այսպիսով, այն աշխատանքը, որի համար Աստված կանչեց մարդկանց, նշանակալից էր նրանց օրերի և ապագայի համար: Դա Աստծո ծրագրերի մի մասն էր: Մենք նույն մոտեցումով պետք է նայենք այն գործին, որի համար Աստված կանչել է մեզ: Այդ ամենը Աստծո մեծ ծրագրերի մի մասն է, որը Նա գերիշխան կերպով իրականացնում է:

Անհնազանդության հետևանքների մասին խորհելու մարտահրավեր (10-19 հմբ)

10-19-րդ համարներում Տերը սովորեցնում է անհնազանդության հետևանքների մասին: Նա ասում է, որ դա նման է վարակի. մի քան, որին ծանոթ ենք այս ժամանակներում (COVID-19): Այս հատուկ պատգամն ուղղված էր այն քահանաներին, ովքեր պատասխանատու էին ժողովրդին սովորեցնելու Աստծուն և Նրա օրենքներին հնագանդվելու:

11-13-րդ համարները բարձրացնում են այնպիսի հարցեր, որոնք ծանոթ էին քահանաներին. դրանք Օրենքին վերաբերող հարցեր էին այն մասին, թե ինչպես է փոխանցվում սրբագրութված կամ պղծված լինելը (տե՛ս Ղևոն. 6:27, 7:16, 22:4-6, Ելից 29:36-37): Ըստ այս համարների բովանդակության՝ Օրենքի համաձայն պղծումը ավելի հեշտ էր փոխանցվում, և հետևաբար, ավելի համատարած էր, քան սրբագրութումը:

Այսպիսով, ի՞նչ էր նշանակում այս դասը ժողովրդի համար, եթե երկար տարիներ նրանք չէին կատարում տաճարը վերակառուցելու հրամանը: Կարդացե՛ք 14-րդ համարը. «...Այս ազգը ու նրանց ձեռքի բոլոր գործերը... և ինչ մատուցանեն այնտեղ, պինձ է»: Նրանց շարունակական անհնազանդության պատճառով նրանք Աստծո աչքում պղծված վիճակում էին:

Սրանք դաժան խոսքեր են: Ո՞չ նրանց ձեռքի գործերը, ո՞չ էլ նրանց մատուցածը ընդունելի չէր Աստծո կողմից, եթե նրանք անհնազանդության մեջ էին: 15-17-րդ համարներում Անգեն նշում է, որ երաշտն ու սովոր, որ նրանք ապրեցին, իրենց անհնազանդության հետևանքն էր:

Բայց եթե ժողովուրդը սկսեց հնազանդվել, 18 և 19-րդ համարների վերջին մասում մարդիկ կանչվեցին «ուշադրություն դարձնելու» կամ հաշվի առնելու իրենց փոխված հանգամանքները: Չնայած երաշտին, նրանք այդ ժամանակ ձմեռային բերք էին տնկել: Սա ներկայացնում էր բերք ունենալու հույսը, որը դեռ պետք է հավաքվեր: Ի պատասխան իրենց նորոգված հնազանդության՝ մարդիկ ստանում են Աստծո խոստումը 19-րդ համարում. «Այս օրվանից սկսած պիտի օրինենք քեզ»: Սա հույսի հայտարարություն էր ժողովրդի համար:

Սա մեզ հիշեցնում է, որ կրոնական սովորույթներին հետևելը չէ, որ օրինություն է բերում: Չեք կարող օրինվել միայն ձեր վարքագծով, այլ ձեր սրտի կեցվածքի ու խոնարի հնազանդությամբ (տե՛ս Ա.Թագ. 15:22):

Քաջալերանք Զորաբարելին (20-23 հմք)

Աստված չափարտեց: Նա նաև պատզամ ուներ Զորաբարելի համար: Աստված նորից հիշեցրեց նրան արարչագործության վրա Իր վերահսկողության (հմք 21) և թագավորական զահերի և նրանց բանակների նկատմամբ Իր գերիշխանության մասին (հմք 22): Ինչպես տեսնում ենք 23-րդ համարում, Աստված նաև հատուկ քաջալերանք ուներ Զորաբարելի համար, որին Նա ընտրել էր՝ առաջնորդելու մարդկանց տաճարը վերակառուցելու գործում (տե՛ս 23-րդ համարի «կառնեմ» և «կդնեմ» բառերին հղումները):

Կարևոր է նշել, որ սա ներկայացնում էր Աստծուն, որը գործում էր Զորաբարելի միջոցով՝ վերականգնելու Դավիթ թագավորի տոհմը՝ Հուդայի կառավարիչ լինելու համար: Սա խլվել էր Զորաբարելի պապից (տե՛ս Երեմ. 22:24-27): Բայց իհմա Զորաբարելը նկարագրվում է որպես «Ի՞ն ծառա» (հմբ 23), որը Դավիթի համար օգտագործված եղրույթ էր (Դ. Թագ. 3:18, Սաղ. 78:70): Սա հաստատում էր, որ նա ուներ նույն հատկանիշը, ինչ Դավիթը՝ որպես Տիրոջ ծառա: Զորաբարելը նույնպես նկարագրված է որպես «կնիք» (հմբ 23): Հին ժամանակներում սա ներկայացնում էր թագավորական իշխանությունը (տե՛ս Եսրեք 3:10-11, 8:8): Այսպիսով, նա բնութագրվում է թագավորական հեղինակությամբ: Երկու կետերն էլ ընդգծեցին Դավիթի տոհմի՝ Հուդայի կառավարիչ լինելու վերականգնումը:

Զորաբարելը պարզապես նախատիա էր, ով սպասում էր ճշմարիտ և վերջնական «Ծառային» և Տիրակալին: 23-րդ համարում «Այդ օրը» արտահայտությունը ապագայի նասին է: «Ծառան» եղրույթ էր, որն օգտագործվում էր Մեսիայի համար (տե՛ս Զաք. 3:8 և 6:9-15, Եսայի 42:1): Աստծո՝ Զորաբարելին ընտրելու վերջնական կատարումը Հիսուս Մեսիայի մեջ լինելն էր: Հիսուսը վերցրեց «ծառայի» տիտղոսը (տե՛ս Գործք 4:27, 4:30, Փիլիպ. 2:7): Հիսուսը նկարագրվեց նաև որպես թագավորություն ունեցող (Հովհ. 18:36) և Որդի, ով կառավարիչ է (Եսայի 9:6-7): Նա նկարագրված է որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր (Հայտ. 17:14 և 19:16): «Թագավորի» և «ծառայի» յուրաքանչյուր հայեցակարգ վերականգնվեց Զորաբարելում և կատարվեց Հիսուսում: Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում Տեր Հիսուսի ծագումնարանության մեջ արձանագրված են Զորաբարելի և Դավիթի անունները (Մատթ. 1:12-13, Ղուկ. 3:27): Հիսուսը և՛ մեր Թագավորն է, և՛ մեր Ծառան:

Աստված եղել է, կա և կինի Իր խոսքի տերը: Սա քաջալերանք էր Զորաբարելի համար, նաև պետք է քաջալերանք լինի մեզ համար:

Մենք նույնպես կարող ենք լինել և՛ Տիրոջ ծառաները, և՛ Նրա «կնիք»-ը: Մենք Քրիստոսի դեսպաններն ենք (Բ Կորնթ. 5:20), երբ կիրառում ենք Անգել 2:4-5-ի սկզբունքները: Քրիստոսն աշխատում է մեր միջոցով՝ մեզ գործածելով որպես գործիքներ՝ իր թագավորու-

թյունը ընդլայնելու: Մենք ուժեղ ենք, երբ աշխատում ենք Տիրոջ ներկայությամբ (Սուրբ Հոգու միջոցով) և առանց վախի, մենք Քրիստոսի դեսպաններն ենք: Թող որ քաջալերվենք՝ կատարելու այն աշխատանքը, որի համար Աստված կանչել է մեզ:

Սրբիվեն Թոյու



- 1. Ո՞վ Տեր, թագավորն ուրախանալու է Քո զորությամբ
ու Քո փրկությամբ որքան շատ է ցնծալու:**
- 2. Նրա սրտի ցանկությունը տվեցիր նրան
ու նրա շուրջերի խնդիրքը չմերժեցիր (Սելա):**
- 3.Քանի որ ամենաընտիր օրհնություններով հասար նրան.
նրա գլխին մաքուր ոսկուց թագ դրեցիր:**
- 4. Քեզնից կյանք խնդրեց, ու նրան երկար օրեր
տվեցիր հավիտյանս հավիտենից:**
- 5. Նրա փառքը մեծ է Քո փրկությամբ.
պատիվ ու մեծություն դրեցիր նրա վրա:**
- 6. Քանզի նրա վրա հավիտենական օրհնություն դրիր,
Քո ներկայությամբ խիստ ուրախացրիր նրան:**
- 7. Քանի որ թագավորը Տիրոջն է վստահում,
Բարձրյալի ողորմությամբ չի սասանվելու:**
- 8. Քո ձեռքը գտնելու է Քո բոլոր թշնամիներին,
Քո աջ ձեռքն ի հայտ է բերելու բոլոր Քեզ ատողներին:**
- 9. Նրանց կրակի հնոցի ես նմանեցնելու Քո բարկության պահին.
Տերն իր զայրույթով կլանելու է նրանց, ու կրակն է լափելու նրանց:**

Սաղմոս 21:1-9

Միսիոներություն դեպի Հայաստան #24

Փառք Տիրոջը, որ այս տարվա միսիոներական թիմը կազմված էր ինը հոգուց: Ընկերներ կային Նիդեղլանդներից, Նոր Զելանդիայից, Հարավային Ավստրալիայից և Նոր Հարավային Ուելսից:

Մեր գործընկերները և բազմաթիվ ընտանիքներ, որոնց մենք աջակցում ենք Հայաստանում, անհամբեր սպասում էին մեզ՝ կրկին տեսնելու համաճարակի հետևանքով երեք տարվա ընդմիջումից հետո:

Մեր մեջ կային վեց քարոզիչներ, ովքեր այցելեցին բազմաթիվ եկեղեցիներ, անցկացրեցին ավետարանչական բացօթյա ժողովներ ու մանկական հավաքույթներ: Ամենակարևոր իրադարձություններից մեկը 22 մարդկանց մկրտությունն էր, ովքեր համաճարակի ժամանակ Տիրոջ մոտ եկան:

Երեսանում Տիրոջն ենք նվիրել նաև մեր նոր շենքը՝ «ՓԱՐՈՍ»-ը: Սա կլինի մեր կենտրոնական գրասենյակը, որտեղ կկարողանանք վարել մանկական ծառայությունները, մեծահասակների աստվածաշնչյան սերտողությունները, ինչպես նաև ընդունել մեր հյուրերին և որոշ ապրանքներ պահեստավորել, որոնք ժամանակ առ ժամանակ ստանում ենք Ավստրալիայից:

Այս անգամ էլ շատերն ընդունեցին Քրիստոսին որպես իրենց Փրկչի: Մարտունն ու Աշոտը շարունակում են հետևել նրանց ու խնամակալել Քրիստոսով:

Մենք կարողացանք այցելել մեր կարիքավոր ընտանիքներից շատերին՝ քաջալերելու նրանց և աղոթելու նրանց համար: Խնդրում ենք պահել ACM-ը ձեր աղոքներում: Հատկապես աղոթե՛ք, որ Հայաստանում խաղաղություն լինի հարևան երկրների հետ:

Եքեւ առաջնորդվում եք հոգանակորելու մի ընտանիքի, ապա խնդրում ենք այցելել մեր կայքէջը՝ www.acmaust.org:

Արցունքներս Լիբանանի համար

ACM-ն աջակցում է որոշ կարիքավոր ընտանիքների Լիբանում, և մենք ունենք երկու գործընկերներ, ովքեր օգնում են մեզ այս ծառայությունում:

Աստված օրինեց Լիբանանը բնությամբ և գեղեցկությամբ, բայց ծանր է տեսնել, թե մարդիկ ինչ են արել այս գեղեցիկ երկրին:

Բանկերը թալանել են ներդրված ողջ գումարը: Այսօր ամենահարուստը նույնքան աղքատ է, որքան կողքի հարևանը, ջուրը պետք է գնել, լույսը հասանելի է օրական մեկ ժամով, ոչ մի բիզնես չի կարողանում գործել, մարդիկ տանը նստած են մթության մեջ, համացանցը հասանելի է օրական ընդամենը մեկ ժամով... Աշխատանք չկա, գնաճը բարձր է, իսկ դեղորայք դժվար է հայրայել:

Մենք չորս օր ապրեցինք այս մարդկանց հետ, տեսանք սարսափելի կենցաղային պայմաններն ու շատ ընտանիքների տառապանքները:

Այնքան մեծ քաղց կար Խոսքի հանդեպ: Շնորհակալ եմ Աստծուն, որ կարողաց քարոզել կիրակի առավոտյան: Այդ օրը կարողացանք նաև սնունդ բաժանել 200 ընտանիքի:

Եթե առաջնորդվում եք օգնելու կամ աջակցելու կարիքավոր մի ընտանիքի Լիբանանում, ապա խնդրում ենք այցելել մեր կայքէջը՝ www.acmaust.org:

ACM

ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ